523(624).

Ա՛յ տղտ, տաղով արի,
Օտներդ շաղով արի,
Բոլ ա անցնես էդ պատով,
Պտտի քարեր կոդրտավ,
Քու ալ ջուբեն կտրաավ։

524(625).

Ա՛յ տղա, դու հերովն արի,
Օչխրի բերովն արի,
Իմ խոր թաղ դալմաղալ ա,
Շուտ տուր են թաղովն արի։

525(626).

Ա՛յ տղտ, էրովն արի,
Ոչխտրի բերովն արի,
Խորս դուռն ա դալմաղալ,
Տերտերի ղոնով արի։

526(627).

Արխալուղս կարեր եմ,
Օսկե կոճակ շարեր եմ,
Նանի՛, ջան, դարդ մի անի,
Ես սիրածս ճարեր եմ։

527(628).

Սև չիր եմ, սիվստակ չիր եմ,
Վանքի դուռն օդուտ եմ,
Ի՞նչ կուտաս իմ մուշտուլուղ,
Ես քյո յարի տեղն ասեմ։

528(629).

Ռեհան եմ, դարչին եմ,
Նորադյուղում յար չունեմ,
Յարս էկավ, խոով դյնաց,
Ղարիրից խաբար չունեմ։

529(630).

Սարերումը տուն ունեմ,
Մեջը օսկե սուն ունեմ,
Ա՛յ աղա, դու քիչ խոսա,
Քյո պես խաղար շուն ունեմ։

530(631).

Ծառի տակը խաղցեր եմ,
Լաչիկս լվացեր եմ,
Լաչիկս բոու քյար ա,
Առածս մեկուճար ա։

532(633).

Սարի արադին մեռնեմ,
Գյինու կտրտսին մեռնեմ,
Ճամփով դյալող շեկ տղա,
Սրաիդ մուրադին մեռնեմ։

533(634).

Հերևան բաղ եմ էրե,
Ջիդյտրս դաղ եմ էրե,
Դոսա ու զուշմանի խաթրին,
Լալս ծիծաղ եմ էրե։

534(635).

Հերեան ուխա եմ էրե,
Թաքյ ծամս ջուխտ եմ էրե,
Շան տղեն սիրվե վրես՝
Գյիաա թե թուխա եմ էրե։

535(636).

Խնձոր, խնձոր, աուն արի,
Կարմիր խնձոր, աուն արի,
Գիտեմ, որ յարս ա բաշխե,
Կպախեմ յոթը տարի։

536(637).

Ա՛յ տղա, բաղարբաշի,
Սապոկներդ վեր քաշի,
Արի, մեր դոնով հնցի,
Քյե ասեմ՝ բարով մաջի։

537(638).

Ա՛յ կաան, մանկան կոան,
Եղունեկ թևես թոան,
Յար ջան, քե որտե՞ղ սիրի,
Քեզարդա վանքյի դոան։

ՊԱՐԵՐԳԵՐ *

1(639). ՀԱԼԻՄԱՆ

Հալիման, հալիմա՛ն,
Հալ լայլուղը իմ մոտ չի,
Դոստրմ աղե ջան,
Դոստ ղոնախը մարալի**։

Ջարկե՛ք թող թողն հելնի,
Մեր միջի թողն հելնի։

Քանաքեռ բանցր տեղ է,
Ջուրն հիվանդի դեղ է,
Սիրած սիրածին չեն տա
Էս ինչ կոապաշտ գեղ է։

* Պարերգերը մեծ մասամբ եղանակային կրկնակներով միահյուսված անկախ խաղիկներով երգեր են, որոնք այստեղ դրվում են խաղիկներից անմիջապես հետո որոշ պայմանականությամբ, սոսկ ժողովրդական խաղիկներով կազմված երգերի ամենատարածված դրսևորումներից մեկը ցույց տալու նպատակով։

** Կրկնվում է յուրաքանչյուր տան սկզբում և վերջում (Ս. Կ.)։

13—245

2(640). ԹԵՄՈՒՐ ԱՂԱ

Ա՛յ Թեմուր աղա, ջա՛ն Թեմուր աղա՛,
Յոթ տարի կերցնեմ Բաղդասու խուրմա։

Վառեր ես լամպեն, կայներ ես ճամփեն,
Ա՛յ Թեմուր աղա. ջա՛ն Թեմուր աղա։

Քցեր էս շալն, կայներ էս կալն,
Ա՛յ Թեմուր աղա, ջա՛ն Թեմուր աղա,
Յոթ տարի կերցնեմ Բաղդասու խուրմա։

Մաշինեն էկավ, ակներն էր մանդր,
Սարմար ու սանդր, բեռներն էր ծանդր։

Լոթի Արանը խուրկեց մանեթը,
Ես ու իմ քուրը նստանք կառեթը։

Կառեթի միջի սլսլան ղուրը,
Իգդիրի խուրն առրավ իմ քուրն։

Ասեղը թելեմ, քովս ի պայեմ,
Կիսուրս մեռնի, պատանքն կտրեմ։

Ա՛յ Թեմուր աղա, ջա՛ն Թեմուր աղա,
Յոթ տարի կերցնեմ Բաղդասու խուրմա։

3(641). ԲՈՒԼԵՅԼԻ

1

Բուլեյլի ջան, բուլեյլի, բուլեյլի՜
Ախպե՛ր, յարդ վայելի, հա՛ լեյլի,
Հարա՛յ լեյլի, բուլեյլի, բուլեյլի։

Հէյլա սարը խաղ ասի, բուլեյլի՜,
Հնդա գլոր դնացի, հա՛ լեյլի,
Հարա՛յ լեյլի, բուլեյլի, բուլեյլի,
Ախպե՛ր, յարդ վայելի, մի բոյի*։

Վարդ եմ քաղե բաղերով, բուլեյլի՜,
Խարս եմ բերե ասկերով, բուլեյլի։
Սարերը լիք մասուր ա, բուլեյլի՜,
Մամաս քեղի կիսուր ա, բուլեյլի։

Խաց եմ թխե լավաշի, բուլեյլի՜,
Խալա եմ բերե թամաշի, բուլեյլի։
Դանակը մըջ բողկին ա, բուլեյլի՜,
Ախպերս մըջ պոլկին ա, բուլեյլի։

Սերն սարին սովոր ա, բուլեյլի՜,
Ախպերս իւաչին քավոր ա, բուլեյլի։

4(642).

2

Ա՛յ բու լեյլի, բու լեյլի,
Առնողը թող վայելի, ջան լեյլի,
Էսօր լավ էր, քանց էրեկ. հա՛ լեյլի.
Վառվում եմ կիշեր-ցերեկ, ջա՛ն լեյլի։

Լեյլի յարս մրսել ա, հագում ա,
Օսկի ղուրը դրել ա, սաղում ա։

Հայրի՛կ, մեռնեմ քու բեղին, բո՛։ լեյլի.
Ընձի չի աաս մըջ դեղին, հա՛ լեյլի,
Լեյլի, լեյլի, ջա՛ն լեյլի, բու լեյլի,
Ընձի տվնք ավրՃուն, ջա՛ն լեյլի։

5(643). ՅԱՐ ՋԱՆ

Հանդիդ բանջար բերող չեմ, յար ջան,
Կալն աշան էրող չեմ, յար ջան,
Բոյով եմ սև սոյով եմ, յար ջան,
Ես ձեր տունը դալող չեմ, յար ջան,
Արի գնանք, ո՞ւր գնանք, յար ջան,
Ճամփեքը շանց տու գնանք, յար ջան։

6(644). ԴԵՐՈՅ ՆԱՐՈՅ ՆԱՅ

Միթամ դու էլ տղջիկ ես, դերոյ նարոյ նա՛յ,
Պառվու էփած քոճիկ ես, դերոյ նարոյ նա՛յ,
Ջերիս ծիրանը պուտ-պուտ, դերոյ նարոյ նա՛յ,
Քեղի կկանչեմ կուտ-կուտ. դերոյ նարոյ, նա՛յ,
Լադան ղրի վրը պատին, դերոյ նարոյ, նայ,
Քեղի կանչեմ վրը լսկին, դերոյ նարոյ, նայ։

7(645). ԴԱԼԻԼ

Դալիլե, ղալիլե, դալիլե, յար ջան,
Թե բերիր մարջան, քեզ կառնեմ, յար ջան.
Դալիլե, դալիլե, դալիլե, յար ջան,
Շողշողուն մարջան, անդին դոհար ջան.
Դալիլե, դալիլե, դալիլե, յար ջան։
Թե բերիր ասեղ, քե կասեմ Բարսեղ,
Դալիլե, ղալիլե, ղալիլե, յար ջան.
Թե բերիր մարջան, քե կասեմ յար ջան,
Դալիլե, դալիլե, դալիլե, յար ջան.
Թե բերիր մատնոց, կմանեմ քո ծոց,
Դալիլե, գալիլե, դալիլե, յար ջան։

8(646). ՆԱՐՈՅ, ՆԱՐՈՅ

Ա

Նարոյ, նարոյ, նարոյ ջան,
Դալի-ղոլի յարո ջա՛ն*։
Նարոն կայնավ կարմնջին,
Օսկե դինտերն հակնջին։

---

* Այս երկտողը կրկնվում է յուրաքանչյուր տան վերջում (Ծան. կազմողի)։

*Այս երկտողը կրկնվում է կամ յուրաքանչյուր երկտողից հետո, կամ առաջնդմեջ (Ծան. կազմողի)։

Հոդի տկով ջուր կերթա,
Շաքար, օսկին դուր կերթա,
Ջայնամ թե օսկին կերթա,
Թրխ իմ յար սալկաթ չերթա։
Նարոյ նալնջու աղջիկ,
Նարոն դուսնաչու սղջիկ։

Կանուչ հավեոիդ մեոնեմ,
Նարոյ, նարոյ, նարոյ ջա՜ն,
Նախշուն մուրաղիդ մեոնեմ,
Դալի, գոլի յարո ջա՜ն։

Ըլա ոսրը սնդ տնեմ,
Քարը ղնեմ հարս անեմ։
Ըլել եմ սարի փեշը,
Ջեմ առնի յարի գեշը։

Նանին թանաք ա ղրկե,
Յարիս նամակ եմ գրե։

9(647).

Բ

Նարոյ նայեցու սղջիկ,
Նարոյ վանեցու աղջիկ*.
Հեսօր ուրբաթ ա, պատ ա,
Սիրտս արծթե թաս ա,
Սրտիկ մալուլ մի մնա,
Աշխարը մեղի չի մնա։
Գացի սարն ախպուր աեսա,
Յար վրեն թիկնուկ տեսա,
Կիսոսեր ինչպեստ բիլբուլ,
Իմ նանու անուշ փեսան։
Հեսօր դուխանը մերն ա,
Գուխնի մահկալն իմ յարն ա,
Ղալաթ արած խոաղներ,
Միջի լավն իմ յարն ա։
Գուխանը խաց եմ տարե,
Բերանը բաց եմ տարե,
Ջեմ գիդում ինչ եմ ասնում,
Դուշմնի հաշկը խանում։

10(648). ՆԱՐՈՅ, ՆԱՐՈՅ, ՆԱՐԸՆՋԻ

Նարո՜յ, նարո՜յ, նարընջի,
Յարս ա մացե Ջարընջի։
Էրկանքը աղով լցվավ,
Նարո՜յ, նարո՜յ, նարընջի,
Իմ սիրաը աաղով լցվավ,
Նարո՜յ, նարո՜յ, նարընջի,
Բոլորի յարն տուն էկավ,
Նարո՜յ, նարո՜յ, նարընջի,
Իմը՝ սարերով հընցավ,
Յարս ա մացե գարընջի։
Ջի չեմ նստե, քուռակ ա,
Նարո՜յ, նարո՜յ, նարընջի,
Նարո՜յ, նարո՜յ, նարընջի,
Ընձի թոգիր Ջարընջի։

11(649). ՀԱՅ ԼԵՋ ՆԱՐԵ

Հայ լեջ նարե ջանե՜, հայ լեջ նարե ջանե՜*
Ճնջիններ էկան աշար-մաշար,
Ես եմ թխե յարիս պաշար,
Յարիս ջամբին զարիր աշխար։

Գարուն ա էկե էրկու ճղեն,
Յարս ա գարձե հուր իրղարեն,
Ընձի թողե եթիմ բալեն։

Ճնջիննե՜ր, գյացեք զարիր աշխարք,
Յարիս ասեք թող շուտ տուն դյա,
Մերն հուրա, արուն գուլա։

Խերն խալիվոր հուր մեոեր ա,
Ախոլրտինքին թուրք զաներ ա,
Մերն հուրա, արուն գուլա։

Ճժերն հմեն որփցեր են,
Ճժերու մեր թուրք տարեր ա,
Ասսու կրակ թրքյու գլխուն,
Ճժերու վիդր զաներ ա...

12(650). ՀԱՆԸՄՆԱ ՆԱ, ՆԱ

Ո՞ւր գնացիր, ուր էկար,
Հանրմնա, նա՜, նա՜,
Ջանրմնա, նա՜, նա՜,
Դուն իմ սրահն դուր էկար,
Հանրմնա, նա՜, նա՜,
Ջանրմնա, նա՜, նա՜**։

Արփաչայի քնարը,
Վառիր սրահս ֆանարը։
Էրևան բաղ եմ արել,
Ջիգյարս գալ եմ արել։
Էրկանքս աղի վրա,
Շամամս թաղի վրա։

13(651). ՀԱՆԸՄ ՆԱՅ

Արի գնանք, ո՞ւր գնանք,
Հանրմ նայ, հանրմ նայ,
Ֆանառ վառենք, դուս դնանք.
Հանրմ նայ, ջանրմ նայ։
Քարր քցի քթոցը,
Հանրմ նայ, հանրմ նայ.

---

* Այս կրկներդը կրկնվում է յուրաքանչյուր երկտողից հետո (Ծան. կազմողի)։

* Կրկնվում է յուրաքանչյուր տուն սկզբում (Ծան. կազմողի)։

** Երկտող-կրկներդը կրկնվում է յուրաքանչյուր տողից հետո (Ծան. կազմողի)։

Մաշինի զբրընգոցը
Հանրմ նայ, ջանրմ նայ։

14(652). ՀՈՒ ԼԵ, ԼԵ

Էս սարին սար չեմ ասի,
Հոե լե՛, լե՛, հոե լե՛,
Շան ազին յար չեմ ասի,
Հոե լե՛, լե՛, հոե լե՛։

Կապուտ ձին խեծել եմ,
Հոե լե՛, լե՛, հոե լե՛,
Արազին մոաեցել եմ,
Հոե լե՛, լե՛, զուրբան։

Իմ յարն ընձի թարգել ա,
Հոե լե՛, լե՛, հոե լե՛,
Ով իմ դարդը իմանա,
Մուսալը սրտում մնա։

15(653). ԼԵԼԵ ՋԱՆ

Դիվու դարեն ծուի կլներ,
Վայ լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛ շան,
Մե բարալիկ մուի կլներ,
Վայ լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛ ջան,
Քուրն ազրոր զուրբան կլներ,
Վայ լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛ ջան,
Հեռու աեզից խուր կլներ,
Վայ լե՛, լե՛, լե՛, լե՛, լե՛ շան։

16(654). ԴՈՒՋՔԱՆԴԻ ԴՈՒՐԱՆԸ

Դուզքանդի, դուզքանդի դուրանը,
Ընձի վառեց յար քո աված նամակը, նշանը,
նկարը։

Արազին մոտեցել եմ,
Դուզքանդի, դուզքանդի դուրանը,
Դարդերս շաաացեր են,
Ընձի վառեց յար քո աված նամակը. նշանը.
նկարը։

17(656). Լ Ո Ի Ր Կ Ե

Լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛,
Խանրմ է լուրկեն,
Դու կայնել էս Վրթոյ տանիս,
Ջանրմ է լուրկեն,
Ոչ կդաաիս, ոչ կրանիս,
Խաթուն է լուրկեն,
Առանց գրոզ իոքիս կառնիս,
Խանում է լուրկեն։
Հեյ լուրկե՛, լուրկե՛, լուրկե՛
Խանրմ է լուրկեն,
Ադջի էդ քո վդի վկնոց,
Խաթուն է լուրկեն,
Ինձ էրեցեց, ընձի մրկեց,
Խանրմէ լուրկեն,
Մեկ օր սրաով ինձ չգրկեց,
Խաթուն է լուրկեն։

18(657). ԱԿՌԱՎ ԹՌԱՎ

Ակռավ թռավ, արաս մնտց իսերկելու,
Քունս քաշեց, յարս մնաց գրկելու։
Յարիս չուիեն աարան Մոսկով ներկելու։
Յանա՛-յանա՛, յան բլուդիդ օզերը,
Գիշերը տարան յարիս վդի դոզերը։
Կանաչ ու կապուա տերեը, տերեը,
Կռունդ սիրիր քո մե բալիդ արեր,
Յարս աարան Ջանգյազորա սարերը։
Մուրադ գեաի չայիրների դոլերը,
Ես մե մարալ, սավդից ընկա չոլերը։
Մուրադ գեաի չայիրները լաի տվեց,
Էդ շան գյաղեն, մազեր դլխին թափ տվեց.
Ղարսա յուիանում դիլինի՛, դիլինի՛,
Դիլինի պայման, դիլինի՛, դիլինի՛,
Դիլինի սայման, դիլինի՛, դիլինի՛։

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ

1(657). ԿԱՐԳԱ ՋԻՍ

Հա՛մ դյուլ, հա՛մ վարդ, հա՛մ նարդիզ,
Ջոլի կռունկ հերկեն վիզ,
Կակ՛ե, մամե՛, կարդա զիս,
Ջորան մարդու մի աու զիս,
Կեթա չոլն մոռնա զիս։
Հա՛մ դյուլ, հա՛մ վարդ, հա՛մ նարդիզ,
Կակե, մամե կարդա զիս,
Մշակ մարդու մի աա զիս,
Մաճ կրռնա, մռռնա զիս։
Հա՛մ գյուլ, հա՛մ վարդ, հա՛մ նարդիզ։
Կակե՛, մամե՛, կարդա զիս,
Ջուլակ մսրդու դու աու զիս,
Մքուք թալա, սլաքա զիս,
Հա՛մ դյուլ, հա՛մ վարդ, հա՛մ նարդիզ,
Գոլի կռունդ հերկեն վիզ։

2(258). ՀԱՐՍԻ ՀՐԱՃԵՇՏԸ ԾՆՈՂՆԵՐԻՆ

Բեր ձեռքդ համբուրեմ, մայրի՛կ,
Կերել եմ կաթդ անուշիկ,